

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾՈՒՄ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ

## ՇՏԱՊԵ՛Ք ՄԱՍՆԱԿՑԵԼ ՄԵՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՑԵ՛Ք ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացու 15
Հեռ.՝ (374 10) 546-431, ֆաքս՝ (374 10) 547-431
Էլ.փոստ՝ corpgov@corpgov.am
Կայք՝ www.corpgov.am




Կորպորատիվ
Կառավարման
Կենտրոն

CIPE



Կոռուպցիան մեծագույն սպառնալիք է օրենքի գերակայության համար:

Կոռուպցիան խոչընդոտում է տնտեսական աճը, խաթարում մրցակցությունը: Որպես թաքնված «հարկատեսակ» կոռուպցիան վանում է ներդրողներին, բարձրացնում բիզնեսի, հետևաբար և սպառողի ծախսերը:

Կոռուպցիան կործանարար է թե՛ խոշոր և թե՛ փոքր, թե՛ բազմազգ և թե՛ տեղական ընկերությունների համար:



# ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԾՐԱԳՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ




Հայ գործարարը, ի շահ իր բիզնեսի երկարաժամկետ զարգացման, չի կարող հեռու մնալ կոռուպցիայի դեմ պայքարից:

Հայաստանյան ընկերությունների հակակոռուպցիոն ակտիվ դիրքորոշման խրախուսմանն է միտված **Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի** կողմից **Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի** (www.cipe.org) աջակցությամբ իրականացվող ծրագիրը:

## Հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի հետևողական իրագործումը պարգևատրում է՝




- ներդրումային գրավչությամբ,
- գործունեության կատարողականի և արդյունավետության աճով,
- բազմազգ ընկերությունների հետ փոխշահավետ գործարար հարաբերություններով,
- շահառուների շահերով և էթիկական արժեքներով հավասարակշռված ու տրամաբանված կորպորատիվ որոշումներով,
- ռիսկերի, այդ թվում՝ հեղինակության ռիսկի նպատակասլաց կառավարմամբ:

## Ծրագրի նպատակներն են՝

- Հայաստանի գործարար հատվածի կողմից հակակոռուպցիոն համապատասխանության ընկալման բարելավումը ու դրա գործնական կիրառումը
- հակակոռուպցիոն բարեփոխումներին աջակցելու նպատակով պետություն-մասնավոր հատված գործակցության խթանումը

## Ծրագրի հիմնական միջոցառումներն են՝

- հակակոռուպցիոն համապատասխանության դասընթացները հայաստանյան ընկերությունների համար
- ընկերությունների հակակոռուպցիոն համապատասխանության ծրագրի մշակմանը աջակցումը

## Ծրագրի գործընկերներն են՝

- Իրավաբանների Հայկական ասոցիացիան (http://armla.am)
- Երևան քաղաքի առևտրաարդյունաբերական պալատը (http://armcci.am)